## 29. ԷՐԹԱՄ ՏՐԱՊԻԶՈՆ

Կէլնի. չէլնի ախքյատ մարթմ, ուր կնիկ: Էն մարթ ինչ կüնդüր որ տարին տավերկու ամիս կաշխատի, ուր իդüրեն չէլնե: Ավուր մեկ ուր միտք կավիրի, կասի. - Բո՛շ ի, թոնեմ Էրթüմ ուրիշ երկիրներ. բüլքյիմ իմ իդüրեն էլնի:

Ուր կնգյüն ծեռ կպոնի, կասի. - Կնի՛կ, քյելե էրթüնքյ: Բüլքյի տեղմ աստված մե կամաթմ տա, մենքյ ապրենքյ:

Կէլնեն կինեն ճամբախ, շատ կէրթüն, թե՝ քիչ, գյեղիմ ռաստ կուգյüն:

Կասի. - Կնի՛կ, էրթüնքյ էսա գյեղ քյնենքյ, չուր առատուն, էլնենքյ էրթüնքյ:

Էն մարթն էլ մուրուսով էր, խետ կմտնի մեչ գյեղին, գյեղակայճտեր որ կտեսնան էսա մարթ, մուրուս իկե փովե վեր սրտին, կկիտնան թե տերտեր ի. կուգյան կասին. - Տյու տերտե՞ր ես:

Կասի. - Խա՛:

Կասին. - Դե՛, որ ըսկուն ի, մեր գյեղ տերտեր չկա, արե էլի տերտեր:

Կասի. - Ծա՛տ աղեկ:

Կմնա իրիկուն քյնելու գյüխ կնիյ կասի. - Ծո՛ մարթ, տյու չուր այլի, փեն, քիմն էլ չես կիտե, ի՞նչխ որ քյե խարցուցին՝ տյու տերտեր ես. տյու ասիր՝ խա, ես տերտեր եմ: Հայդե տերտեր, տերտեր, որ վաղ էրթաս ժüմ ի՞նչ պիտի ասես:

Էն էլ կասի. - Կնի՛կ, ախր պüնմ կանենքյ, կնցուցենքյ:

Առատուն կէլնի կէրթü ժüմ: Ժüմ կօխնի, ժողովուրթ կուգյա կլցվի ժüմ, աղոթք կանեն:

Տերտրոչ ասածն էլ էսա մեկ խաբüրն ի ճա՛ կասի՝ էրթüմ Տրապիզոն, գյüմ Տրապիզոն. էրթüմ Տրապիզոն, գյüմ Տրապիզոն. էրթամ Տրապիզոն, գյüմ Տրապիզոն. էրթüմ Տրապիզոն, գյüմ Տրապիզոն: Ժողովուրթն էլ միամիտ էլնելով չեն կիտե ի՞նչ բüս ի, ի՞նչ կասի, կամ ինչ պիտի ասի:

Մեռել թüղի, կնունքյ անի, պատարաքյ անի, փսակ անի, ճü՛ էդ մեկ խüբüրն ի՝ էրթüմ Տրապիզոն, գյüմ, էրթüմ Տրապիզոն, գյüմ:

Ավուր մեկ էն գյեղի ռես կմեռնի, որ ճարուստ երևելի մարթմ էր: Ժողովուրթն էլ տերտրոչ կասի. - Առատուն ռեսի խամար պատարաքյմ պիտի անես:

Առատուն պատարաքյ կանի, կպոծնի, կուգյü ռեսի կարքյ կատարելու գյüխ, որ պիտի ռեսի կարքյ կատարեն. տերտերն ի կմտածի. կասի՝ ռես քյանի որ ճարուստ մարթ ի, պատվավոր ի, էնոր պետքյ է էսօր խոսքյմ üվել ասեմ, որ խորոտ թüռüդճխտով էլնի:

Չում էնոր կասեր՝ էրթւամ Տրապիզոն. գյըմ Տրապիզոն, էրթաւ Տրապիզոն. գյըմ, հըմըն էսօր կասի՝ էրթւմ Տրապիզոն գյըմ. էրթւամ Սւամսոն գյըմ, էրթըմ Տրւապիզոն գյըմ, էրթըմ Սամսոն գյըմ, էրթըմ Տրապիզոն գյըմ, էրթամ Սամսոն գյամ:

Ժողովուրթ որ կլսեն տերտեր վեր ռեսին խոսքմ ավել կասի. սաստիկ կպըրկանան, թե. մեր մեռելներ որ ախքյւստ ին. կարճ կասեր, պատարաքյն էլ կարճ կաներ. հմեն պան էլ կարճ կասեր. հըմըն էսօր որ հարուստ ռեսն էր, որ մեռիր էր. պատարաքյն էլ էրկեն արաց, կարքյն էլ էրկեն արաց: Տեմաքյ էսւ տերտեր ւսճւառությամք իրար կտեպնի. չունգյին ախքյատ կանի. որ ախքյտին կւարճ կասի, զըննգյնին պանմ կավլցուցի. որ ըսկուն ի՝ էսա տերտերոչ մուրուս տուս տսւնքյ, խանենքյ տյուս էրթըն:

Խոսքյեր կընին մեկ, խեղճ տերտրոչ մուրուսից կպռնեն, կուտան ըռճև փետի. տերտրոչ մուրուս քիթուն կփիտեն, տերտրոչն էլ խորոտ կճըրթեն, ինչ կընդըր էլ սւրծաթ, ոսկի տվիր ին, մոտեն կառնեն, անութի. ծարավ գյեղից կխանին տյուս. կէրթըն:

Ճըմքըխ կնիյ կասի. - Աստված քյո տուն ավիրի, տյու խանգյիստ ռհըթ կէրթիր Տրապիզոն կուգյիր. քյո դըվին ի՞նչ էր խետ Սամսոնա, Սամսոն վերեն ըվլցուցիր. մեր տուն տեղ վեր մե ավիրիցիր. զեռրով ինքյ մեր տեղ կնտե. կտորմ խորոտ կապրինքյ:

Հը՛ տոտնչացին, հը՛ ինգյըն ճամքւախ կնացին. էլ ուրենց կըմնաթ չկնդըն: